



Արթուր Ռոբերտի ՊՈՂՈՍՅԱՆ
ՀՀ վարչական դատարանի դատավոր,
Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի ավագ դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ՀՀ ԴԱՏԱՐԱՆԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը /այսուհետ նաև՝ ՎԴՕ/ ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ուժի մեջ մտել՝ 2008 թվականի հունվարի 1-ից: Տվյալ օրենսգիրքն իր ավելի քան երեք տարվա գործողության ընթացքում փոփոխվել ու լրացվել է ընդամենը տասներկու անգամ: Սակայն սույն հոդվածի շրջանակներում կանդրադառնանք հատկապես այն փոփոխություններին ու լրացումներին /ՅՕ-135-Ն/, որոնք պայմանավորված են Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի ստեղծմամբ /սկսել է գործել 2010 թվականի դեկտեմբերի 1-ից/:

Եվ այսպես, համապատասխան օրենքների նախագծերի փաթեթը ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ մուտք է եղել ՀՀ Ազգային ժողով 13.10.2010 թվականին, ընդգրկվել ՀՀ Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգում՝ 25.10.2010 թվականին, ընդգրկվել չորսօրյա նիստերի օրակարգում՝ 25.10.2010 թվականին, ընդունվել առաջին ընթերցմամբ՝ 27.10.2010 թվականին, ընդունվել երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 28.10.2010 թվականին: Այնուհետև ստորագրվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից 29.10.2010 թվականին և հրապարակվել «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»՝ 29.10.2010 թվականին /մեկնաբանությունները թողնում ենք ընթերցողին/:

Մինչև ՀՀ վարչական վերաքննիչ դատարանին բուն անդրադառնալը հատկապես կարևոր է կրկին հիշատակել ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասը, ըստ որի Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև մասնագիտացված դատարաններ:

Իր հերթին, ՀՀ դատական օրենսգրքի /ՀՀ Ազգային ժողովի կողմից նույնպես 28.10.2010 թվականին ընդունված ՅՕ-136-Ն օրենքի խմբագրությամբ/ 3-րդ հոդվածը նախատեսում է. «1. Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանն է (այսուհետ՝ վճռաբեկ դատարան), որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը:

2. Հայաստանի Հանրապետությունում գործում են նաև առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները:

3. Առաջին ատյանի դատարաններն են՝

1) ընդհանուր իրավասության դատարանները.

2) վարչական դատարանը:

4. Վերաքննիչ դատարաններն են՝

1) քրեական վերաքննիչ դատարանը.

2) քաղաքացիական վերաքննիչ դատարանը.

3) վարչական վերաքննիչ դատարանը:

5. Վարչական դատարանը և վարչական վերաքննիչ դատարանը մասնագիտացված դատարաններ են:»:

Փաստորեն, ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով Հայաստանի Հանրապետությունում կարող են գործել բացառապես ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև մասնագիտացված դատարանները: Ըստ որում, «ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները» բառակապակցությունը նշանակում է, որ **վերաքննիչ դատարանը պետք է լինի ընդհանուր իրավասության: Մինչդեռ, ՀՀ դատական օրենսգրքի 3-րդ հոդվածի 4-5-րդ մասերի իմաստով ներկայումս Հայաստանում գործում են քրեական, քաղաքացիական և վարչական վերաքննիչ երեք դատարաններ, որոնցից միայն վերջինս է մասնագիտացված դատարան: Սակայն, մեր կարծիքով, ՀՀ քրեական և քաղաքացիական վերաքննիչ առանձին երկու դատարանները նույնպես մասնագիտացված են. մեկը՝ քրեական գործերով, իսկ մյուսը՝ քաղաքացիական գործերով: Այս իմաստով մեզ համար անհասկանալի է օրենսդրի տրամաբանությունը, ըստ որի քրեական և քաղաքացիական վերաքննիչ դատարանները, որոնք փաստացի մասնագիտացված են, դասվել են ընդհանուր իրավասության վերաքննիչ դատարանների շարքին: Գտնում ենք, որ ընդհանուր իրավասության վերաքննիչ դատարանը ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով կարող է ձևավորվել միայն որպես միասնական դատարան, որտեղ կարող են գործել քրեական և քաղաքացիական գործերով առանձին կոլեգիաներ կամ պալատներ: Այսպիսի մոտեցումը պայմանավորված է նաև նրանով, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննության են առնվում և՛ քրեական, և՛ քաղաքացիական գործերը: Ստացվում է, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը և ՀՀ վճռաբեկ դատարանը քննում են քրեական և քաղաքացիական գործեր, սակայն միջանկյալ դատական ատյան հանդիսացող ՀՀ քրեական և քաղաքացիական վերաքննիչ երկու դատարաններն արդեն հանդես են գալիս որպես մասնագիտացված դատարաններ՝ առանձին քննելով քաղաքացիական կամ քրեական գործեր: Ի վերջո, անհասկանալի են օրենսդրի կողմից ընդունված «տարանջատման չափորոշիչները», որոնց արդյունքում միայն ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն է ճանաչվել մասնագիտացված:**

Ի դեպ, ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ ՍԴՈ-873 որոշման, որով ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր են ճանաչվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «առկա է» և «հանգեցրել է» բառակապակցությունները, պատճառաբանական և եզրափակիչ մասերում որևէ կերպ /ուղղակի կամ անուղղակի/ չի արտահայտվել այնպիսի իրավական դիրքորոշում, ըստ որի ՀՀ դատական համակարգում նպատակահարմար է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի ստեղծումն ու գործունեությունը: Ավելին, ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ ՍԴՈ-873 որոշումը վերաբերում է վարչական արդարադատության երկաստիճան համակարգում ՀՀ վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետության ապահովմանը /հատկապես վճռաբեկ բողոքը վերադարձնելու ինստիտուտին/: Դրա մասին են խոսում հատկապես տվյալ որոշման 6-րդ կետի վերջին, 7-րդ կետի առաջին, 8-րդ կետի չորրորդ և 10-րդ կետի առաջին պարբերությունները, ըստ որոնց՝ «... հիմնական բացը, որը հանգեցնում է վարչական դատարանի ակտերի բողոքարկման առկա երկաստիճան համակարգի գործունակության էական թուլացմանը, վերաբերում է բողոքը վերադարձնելու հիմնախնդրի իրավակարգավորմանն ու դրան համապատասխան՝ կառուցակարգային երաշխիքների ապահովմանը: ...», «Վիճարկվող 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում տեղ են գտել քաղաքացիական դատավարության եռաստիճան համակարգին բնորոշ իրավակարգավորումներ, մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական արդարադատության ներկայումս գործող երկաստիճան համակարգում վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոքարկման իրավունքի

ապահովման երաշխիքները: Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի, կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ: Սահմանադրական դատարանը հաշվի է առնում այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով: Ուստի նրա որևէ կառուցակարգային կարգավիճակ չի կարող լիազորության լիարժեք կատարման խոչընդոտ հանդիսանալ: Միաժամանակ, սահմանադրական իրավակարգավորման առանցքային խնդիրներից մեկը հենց այն է, որպեսզի երաշխավորվի, գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթայի օրգանական ամբողջականությունն ու լիարժեքությունը: Եթե օրենսդիրն անհրաժեշտ է համարել Հայաստանում ձևավորել մասնագիտացված վարչական դատարան՝ միայն դատական մեկ աստիճանով, իսկ վերջինիս ակտերի բողոքարկման իրավասությունը վերապահել վճռաբեկ դատարանին, ապա բողոքարկման համակարգի ամբողջականությունն ու արդյունավետությունը նույնպես պետք է երաշխավորվի այս կառուցակարգային լուծումների շրջանակներում: Մասնավորապես, դա վերաբերում է նաև բողոքների ընդունման ու դրանց ըստ էության քննության առանձնահատկություններին: ...», «Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական սխալի՝ գործի սխալ լուծմանը հանգեցրած լինելու կամ չլինելու **փաստի հաստատումն** իր բնույթով չի վերաբերում դիմումի ընդունելիության պայմաններին, նման փաստի հաստատումը կարող է տեղի ունենալ դատաքննության փուլում՝ արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Որպես վճռաբեկ բողոքի ընդունելիության պայման կարող է հանդես գալ գործի ելքի վրա ազդեցության վերաբերյալ վճռաբեկ բողոք բերող անձի **ենթադրության ներկայացված լինելու հանգեցրել է կամ չի հանգեցրել** գործի սխալ լուծմանը: ...», «ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վարչական դատարանի ակտերի բողոքարկման ինստիտուտի լիարժեքությունն օրենսդրորեն ապահովված չէ: Այս հարցում իրավական անորոշությունը հաղթահարելու և իրավակարգավորման բացը լրացնելու համար էական նշանակություն կարող է ունենալ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 20-րդ գլխում վճռաբեկ բողոքը վերադարձնելու հստակ իրավակարգավորումը՝ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-780 որոշման և սույն որոշման մեջ շարադրված իրավական դիրքորոշումները հաշվի առնելով: ...»:

Մինչդեռ, ՀՀ կառավարության օրենսդրական նախաձեռնության արդյունքում /ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ ՍԴՈ-873 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2010 թվականի դեկտեմբերի 1-ը/ ՀՀ Ազգային ժողովը, ընդունելով օրենքների նախագծերի փաթեթը, մի շարք հնարավոր լուծումներից նպատակահարմար է գտել ստեղծել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան այն դեպքում, երբ ՀՀ սահմանադրական դատարանի հիշյալ որոշմամբ մատնանշված հիմնախնդիրը վերաբերում է հիմնականում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը վերադարձնելու ինստիտուտին, իսկ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի ստեղծմամբ, մեր կարծիքով, տվյալ հիմնախնդիրը այդպես էլ չլուծվեց:

Այս առումով անհրաժեշտ է հիշատակել այն հանգամանքը, որ ՀՀ դատական օրենսգրքի 52-րդ հոդվածը /մայր խմբագրությամբ/ նախատեսում էր, որ վճռաբեկ դատարանը կազմված է վճռաբեկ դատարանի նախագահից, երկու պալատների նախագահներից և չորս դատավորներից: Ըստ որում, նույն օրենսգրքի 54-րդ հոդվածի /նույնպես մայր խմբագրությամբ/ ուժով «վճռաբեկ դատարանի բոլոր դատավորները պարտավոր են մասնակցել վճռաբեկ դատարանի նիստին, իսկ վճռաբեկ դատարանի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է առնվազն հինգ դատավոր: Վճռաբեկ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է առնվազն չորս դատավոր: Վճռաբեկ դատարանը գործն ըստ

էութեան չլուծող դատական ակտերն ընդունում է նիստին ներկա դատավորների ձայների մեծամասնութեամբ:»:

Փաստորեն, ՀՀ դատական օրենսգրքի ուժի մեջ մտնելով ՀՀ վճռաբեկ դատարանի կազմը նվազեց ընդամենը յոթ դատավորի, ինչը պայմանավորված էր վերաքննիչ երկու դատարանների վրա դատական ակտերի վերանայման հիմնական «բեռը» դնելով /այս կապակցությամբ էլ էապես վերանայվեցին ու ընդլայնվեցին վերաքննիչ դատարանների լիազորությունները/: Իսկ ընդհանուր յոթ դատավորից բաղկացած ՀՀ վճռաբեկ դատարանի հիմնական սահմանադրական գործառույթն է օրենքի միատեսակ կիրառության ապահովումը, որը պետք է իրականացվեր խիստ սահմանափակ քանակությամբ գործեր վարույթ ընդունելով և հանդես գալով բացառապես որպես իրավունքի դատարան: Կարծում ենք, որ ՀՀ դատական օրենսգրքի ընդունմամբ և գործողությամբ Հայաստանում ներդրված դատական համակարգն այդպես էլ լիարժեքորեն չգործեց այնպես, ինչպես նախատեսված էր հեղինակների կողմից, և ՀՀ դատական օրենսգրքի ողջ բարեփոխական /ռեֆորմիստական/ գաղափարախոսությունն այդպես էլ չգտավ իր ամբողջական պրակտիկ կիրառությունը:

Վերադառնալով սահմանադրական արդարադատությանը՝ հարկ ենք համարում նշել նաև, որ իրավական ակտի որևէ դրույթի /իրավական նորմի/ առանձին բառը կամ բառակապակցությունը չի կարող ճանաչվել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր, քանի որ այդպիսին կարող է ճանաչվել միայն ամբողջական դրույթը, օրինակ՝ օրենքի համապատասխան հողվածը, կամ հողվածի մասը, կամ կետը, կամ ենթակետն ամբողջությամբ, այսինքն՝ համապատասխան իրավական նորմը, քանի որ վերջինս իմաստավորվում է հենց նրանում ընդգրկված բառերի ամբողջականությամբ: Ավելին, իրավական նորմը չի կարող ճանաչվել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված մեկնաբանության շրջանակներում, քանի որ իրավակիրառական պրակտիկան երբեմն կարող է ձևավորվել ՀՀ Սահմանադրությանը չհակասող իրավական նորմի սխալ մեկնաբանության արդյունքում: Տվյալ պարագայում իրականում ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող իրավական նորմը չի կարող ճանաչվել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր միայն սխալ իրավակիրառական պրակտիկայի պատճառով. իրավական նորմը պարզապես կամ համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը, կամ հակասում՝ անկախ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված մեկնաբանության շրջանակներից: Այս իմաստով մեր համար ընկալելի չեն նաև ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումների եզրափակիչ մասերում տեղ գտած «այնքանով, որքանով», «սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումների մասով» և նմանատիպ բառակապակցությունները /տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 13.10.2009 թվականի ՍԴՈ-833 և 14.01.2010 թվականի թիվ ՍԴՈ-851 որոշումների եզրափակիչ մասերը/:

Այնուամենայնիվ, ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ ՍԴՈ-873 որոշման մեջ ամրագրված հիմնախնդիրները, մեր կարծիքով, իրենց օրենսդրական լուծումը կարող էին ստանալ ՀՀ վճռաբեկ դատարանի կազմում առանձին վարչական պայատի ստեղծմամբ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի «Վարույթը վճռաբեկ դատարանում» վերտառությամբ 20-րդ գլխի համահունչ փոփոխությամբ ու լրացմամբ:

Ի դեպ, հիշարժան է, որ 2008 թվականի հունվարի 1-ից ՀՀ դատական և վարչական դատավարության օրենսգրքերի ուժով Հայաստանում վարչական արդարադատության **երկաստիճան** համակարգի գործողության մեջ դնելը պայմանավորված է եղել առաջին հերթին նրանով, որ վարչական մարմիններն իրենց հերթին հարուցում են վարչական վարույթ, արդեն հարուցված վարչական վարույթի շրջանակներում քննության են առնում վարչական իրավախախտման վերաբերյալ համապատասխան գործը և արդյունքում կայացնում են միջամտող, բարենպաստ կամ զուգորդվող վարչական ակտ: Այսինքն՝ սովորաբար վարչական մարմինները մինչդատարանական կարգով և վարչական վարույթի շրջանակներում արդեն մեկ անգամ քննության են առնում վեճի առարկա հարցը և կայացնում համապատասխան անհատական իրավական ակտ: Իսկ ՀՀ վարչական դատարանը, առաջին ատյանի կարգով իրականացնելիս վարչական

արդարադատություն և ըստ էության լուծելիս վեճը, հիմնականում հանդես է գալիս որպես վարչական մարմնի կողմից իրականացված համապատասխան վարչական վարույթի և ընդունված վարչական ակտի /վարչարարության/ իրավաչափությունը ստուգող դատական ատյան, ինչը բացակայում է քաղաքացիական դատավարության շրջանակներում: Ըստ որում, ամենևին էլ պարտադիր չէ վարչական արդարադատության բնագավառում եռաստիճան դատական համակարգի գործողությունը, քանի որ առաջին ատյանում, ի տարբերություն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի, գործ ունենք լրիվ մասնագիտացված դատարանի հետ, որի արդարադատության իրականացման «որակը» վարչական գործերով պետք է բարձր լինի:

Ինչ վերաբերում է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի իրավագործություններին, ապա ՎԴՕ 117.5-րդ հոդվածը վերաբերում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուն, 117.6-րդ հոդվածը՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելուն, իսկ 117.13-րդ հոդվածը՝ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի լիազորություններին: Ըստ որում, վերաքննիչ դատարանների լիազորությունները սահմանված են նաև ՀՀ դատական օրենսգրքի 48-րդ հոդվածում:

ՀՀ վարչական վերաքննիչ դատարանին և ՀՀ վճռաբեկ դատարանին վերապահված լիազորությունների /տես հատկապես ՎԴՕ 117.5-րդ, 117.6-րդ, 117.13-րդ, 118.7-րդ և 118.15-րդ հոդվածներ/ մասով գտնում ենք, որ օրենսդիրը, իհարկե հաշվի առնելով յուրաքանչյուր դատական ատյանի գործառույթային առանձնահատկությունները, սահմանել է գրեթե նույն լիազորությունները: Փաստորեն, տվյալ դեպքում գործ ունենք հիմնականում միևնույն լիազորություններով օժտված երկու տարբեր դատական ատյանների հետ: Ըստ որում, ՀՀ սահմանադրական դատարանի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ ՍԴՈ-873 որոշման մեջ ամրագրված վարչական արդարադատության համակարգում ՀՀ վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետության ապահովմանը վերաբերող հիմնահարցերը /հատկապես վճռաբեկ բողոքը վերադարձնելու ինստիտուտի մասով/ շարունակում են պահպանվել արդեն վարչական վերաքննիչ արդարադատության բնագավառում: Այս կապակցությամբ առանձնահատուկ է ՎԴՕ 117.6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթը, ըստ որի վերաքննիչ բողոքը վերադարձվում է, եթե բողոքի շրջանակում առերևույթ բացառվում է դատական սխալի՝ նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման առկայության հնարավորությունը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Տվյալ պարագայում ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, քննության առնելով վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու կամ վերադարձնելու հարցը, պարտավոր է անդրադառնալ նաև ՀՀ վարչական դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտման առկայությանը կամ բացակայությանը, դրանց առերևույթ լինելուն կամ չլինելուն, գործի ելքի վրա ազդելուն կամ չազդելուն, ինչը, մեր կարծիքով, վարչական վերաքննիչ արդարադատության տվյալ փուլում անընդունելի է այն պարզ պատճառով, որ վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելիս կամ վերադարձնելիս դատարանը պետք է ստուգի միայն տվյալ բողոքում ձևական /ֆորմալ/ պահանջների պահպանվածությունը և որևէ կերպ չպետք է անդրադառնա ՀՀ վարչական դատարանի կողմից դատական սխալ թույլ տալուն, դրա առերևույթ լինելուն և գործի ելքի վրա ազդելուն /այդ հարցերին կարող է անդրադառնալ բացառապես վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո/: Գտնում ենք նաև, որ վերաքննիչ բողոքը կարող է վերադարձվել բացառապես ձևական թերությունների առկայության դեպքում, և բողոքաբերը բոլոր դեպքերում պետք է հնարավորություն ունենա որոշակի ժամկետում շտկել /վերացնել/ իր բողոքի մատնանշված թերությունները և/կամ ներկայացնել համապատասխան միջնորդություններ:

Ըստ որում, ՎԴՕ 117.7-րդ հոդվածի 1-ին մասի ուժով դատավարության մասնակիցը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին վերաքննիչ դատարանի որոշումն ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իրավունք ունի պատասխան ուղարկելու վերաքննիչ դատարան և դատավարության այլ մասնակիցների: Տվյալ պարագայում հակառակորդ դատավարության մասնակիցը վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու /վերադարձնելու/ հարցի քննության փուլում զրկված է ՀՀ վարչական դատարանի կողմից դատական սխալ թույլ տալու, դրա առերևույթ լինելու, գործի ելքի

վրա ազդելու և այլնի մասին իր իրավական դիրքորոշումը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանին ներկայացնելու հնարավորությունից /տվյալ իրավունքը վերջինիս մոտ ծագում է միայն վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելուց հետո/, ինչը հանդիսանում է կողմերի հավասարության և մրցակցության դատավարական հիմնարար սկզբունքների խախտում:

Սույն հոդվածի շրջանակներում առանձնահատուկ ուշագրավ է նաև ՎԴՕ 117.12-րդ հոդվածը, ըստ որի «1. Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար:

2. Վերաքննիչ դատարանն ընդունում է սույն օրենսգրքով կամ վարչական դատարանի սահմանած ժամկետում դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքի, երբ գտնում է, որ դրանք գործի լուծման համար էական նշանակություն չունեն: Եթե դատավարության մասնակիցը չի հիմնավորում, որ վարչական դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, ապա դատական ծախսերը, անկախ գործի ելքից, սույն օրենսգրքի 59-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված չափով կրում է այդ դատավարության մասնակիցը:

3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ վարչական դատարանում հաստատված փաստն ընդունվում է որպես հիմք, եթե բողոքում չի վիճարկվում այդ փաստը, կամ վերաքննիչ դատարանն անհրաժեշտ չի համարում կրկին հետազոտել այն:»:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-4-րդ կետերը սահմանում են, որ «2. Վերաքննիչ դատարանն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու և բողոքը քննելիս հիմնվում է միայն այն ապացույցների վրա, որոնք ներկայացվել են առաջին ատյանի դատարանին: Եթե առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացվել կողմերի կամքից անկախ հանգամանքներով, ապա վերաքննիչ դատարանը բեկանում է գործը և այն ուղարկում համապատասխան առաջին ատյանի դատարան՝ նոր քննության, եթե գտնում է, որ ապացույցն էական նշանակություն ունի գործի լուծման համար:

3. Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին ատյանի դատարանում հաստատված փաստերն ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է այդ փաստը, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին ատյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի հաստատած փաստը, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:

4. Եթե առաջին ատյանի դատարանը հետազոտված ապացույցների հիման վրա դատական ակտում եզրակացության չի հանգել որևէ փաստի վերաբերյալ, ինչը պարտավոր էր անել, ապա վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստ, եթե առաջին ատյանի դատարանի հետազոտած ապացույցների հիման վրա հնարավոր է հանգել նման եզրակացության:»:

Իսկ նույն օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է, որ «3. Վերաքննիչ բողոքը (կամ դրա մասը) ենթակա է քննության, եթե բողոք բերող անձը տվյալ հարցի վերաբերյալ բողոքում արտահայտած իր դիրքորոշումը հայտնել է առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ: Բացառություն է այն դեպքը, երբ բողոք բերող անձը զրկված է եղել այդ հարցի վերաբերյալ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ իր դիրքորոշումը հայտնելու հնարավորությունից:»:

Ուսումնասիրելով և համեմատելով վերոշարադրյալ ՎԴՕ 117.12-րդ և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ, 219-րդ հոդվածները՝ կարելի է եզրահանգել, որ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը, դատական ակտը վերանայելով վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում,

այնուամենայնիվ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական վերաքննիչ դատարանի, պարտավոր է ընդունել դատավարության մասնակցի կողմից ՀՀ վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքի, երբ գտնում է, որ դրանք գործի լուծման համար էական նշանակություն չունեն /ըստ որում, ՀՀ վարչական դատարանի կողմից արդեն դատաքննության փուլում ներկայացված լրացուցիչ ապացույցն ընդունվում է միայն, երբ այն ներկայացնողը հիմնավորում է գործի քննության նախապատրաստության ընթացքում այդ ապացույցը ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով, ՎԴՕ 104-րդ հոդվածի 1-ին մաս/։ Ստացվում է, որ ՀՀ վարչական դատարանի կողմից իրականացված ամբողջ դատավարությունը /կատարած աշխատանքը/ կարող է մեկ ակնթարթում «չեզոքացվել», երբ դատավարության մասնակիցը դիտավորյալ կամ չհասկանալու հետևանքով առաջին ատյանի դատարանին չի ներկայացնում գործի ելքի վրա ազդող ու իր տիրապետության ներքո գտնվող ապացույցը կամ չի տեղեկացնում առաջին ատյանի դատարանին ու դատավարության մյուս մասնակիցներին այդ ապացույցի գոյության մասին /չի ներկայացնում, օրինակ, ապացույցի ապահովման միջնորդություն/, որպիսին ընդունվում է արդեն ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից և կարող է կանխորոշել ՀՀ վարչական դատարանի դատական ակտի «ճակատագիրը»։ Ավելին, այդպիսի վարքագիծ դատավարության մասնակիցը կարող է դրսևորել նաև ռազմավարական նպատակով։ Իսկ այն դեպքում, երբ դատավարության մասնակիցը չի հիմնավորում, որ ՀՀ վարչական դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, ապա առավելագույնը կրում է համապատասխան դատական ծախսը։ Ավելին, վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ վարչական դատարանում հաստատված փաստը կարող է չընդունվել որպես հիմք՝ զուտ նոր ապացույց ներկայացվելու և ընդունվելու հետևանքով։

Այս իմաստով ՎԴՕ 117.12-րդ հոդվածի 2-րդ մասի իրավական նորմը էապես նվազեցնում է ՀՀ վարչական դատարանի «դերակատարությունը», որը ՀՀ դատական համակարգում կրում է արդարադատության իրականացման «ամենամեծ բեռը» և հանդիսանում է հենց գործը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննող դատարան, իսկ մյուս վերադաս դատական ատյաններն ի հայտ են գալիս միայն բողոքի առկայության դեպքում և հանդիսանում են միայն առաջին ատյանի դատարանի դատական ակտերը վերանայող դատարաններ։ Գտնում ենք, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 208-րդ հոդվածի 3-րդ, 219-րդ հոդվածի 2-4-րդ կետերում տեղ գտած վերոհիշյալ իրավակարգավորումներն առավել արդյունավետ են եռաստիճան արդարադատության իրականացման պայմաններում։

Ի վերջո, ՎԴՕ 117.11-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «5. Դատաքննությունը վերաքննիչ դատարանում սկսվում է նախագահող դատավորի կամ կոլեգիալ կազմի դատավորի զեկուցումով։ Ձեկուցողը շարադրում է բողոքի և բողոքի դեմ ներկայացված պատասխանի փաստարկները։ Կոլեգիալ կազմի դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողին, դատաքննությանը ներկայացած դատավարության մասնակիցներին, որից հետո բողոքով գործի դատաքննությունը համարվում է ավարտված, և հայտարարվում են դատական ակտը հրապարակելու վայրն ու ժամանակը»։

Այս իրավանորմի առնչությամբ գտնում ենք, որ ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում դատաքննության ընթացքում դատավարության մասնակիցները զրկված են իրենց իրավական դիրքորոշումը դատարանին ներկայացնելու հնարավորությունից, ինչը հանդիսանում է նաև անձի դատարանի առջև լսված լինելու իրավունքի սահմանափակում։ Ըստ որում, դատաքննության ընթացքում բացակայում է նաև ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի կողմից ընդունված նոր ապացույցի հետազոտման հնարավորությունը։